

կլիզաց զալիօնս ի վարձու իբրու մարտնչել ընդ Ֆրանցլիսս, եւ նոքա պատասխանեալ էին թէ Ոչ է օրէն այդ մինչեւ ցարդ: Արդ զանուն եղին Սէֆէր օրթայ Մաճարի, եւ զազմա քիւրէկ հանդերձ գործաւուրօք մեքենայից յուզարկէին ի սահմանս յայնս եւ զօտայս եէնկիչարեաց եւ ոմամքք պէկլէրպէկօք կարգեալ, ասեն, սէրասքէր զնիլ զՊուտիմ պէկլէրպէկիսի եւ անդ ժողովիլ զօրացն ի մուհաֆէզէ եւ ի պատերազմունս, յոր վայր եւ կամիցին արշաւել՝ արշաւեսցեն արքունական հրամանաւ:

ԺԸ.— Յաւուր բարեկենդանիս Առաջաւորի (5 Փէպր. 1682) մինչդեռ զնարդենիս անցք առ ձեզ գրէի, եհաս լուր առ մեզ՝ թէ մեռաւ Թէլլի խասէքի: Սա որ ութերորդում էր խասէքի Սուլթան Իպրահիմի եւ յոյժ ասորժակ բարուցն իգամոլականի, մանաւանդ մեղկեալ ի փարիլն եւ զմայլեալ թմրէր յանձնեղականն կանացի: Մինչ զօրացն նենդ գործեալ զնէին յարգելարան զբռնակալն աշխարհի, զամենայն մուացեալ ի սրտէ՝ Ահ թէլլում կէրն պարի, ասելով ի ներքուստ ընդ պատուհանն խօսակցեալ առ սա ըզզբաղի, զոր վասն չքնաղ կերպարանին եւ սիգաճեմ ճօճելոյն սիրալի զանունն Հուամաշահ կոչեալ ի սէրն սաստիկ դեգերի, այսինքն եթէ ի ձեռս բազմաց անկանիլ օղայնոյս դժուար թէ մարթի: Իսկ յետ սպանման Սուլթան Իպրահիմի հանեալ զնա արտաքս՝ փաշայիւք ոմամքք ապրի, որպէս թէ յազնիւ յերիվարէ գլորեալ ի գրաստու նստի: Որում ծանօթացաք երբեմն եւ զյոլովս տեղեկացաք սակս արքունականն կարգի, որ այնքան տէվլէթ եւ զինչս մեծազինս տեսեալ, որ ոչ իսկ ընդ գրով անկանի. մինչ զի յետոյ արքայս նէնէ ասելով՝ ի տեսանելն խանդաղատի: Սա որ ի հարսանիս որդւոյն եւ դստերն արքայիս յԱնգրիանուպօլիս հետեւի, եւ նստեալ երբեմն ընդ ընծաւ